ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/71

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի կողմից 20.06.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/71 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 20.06.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից հայտարարված «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքի տարածքում «Եռասերունդ երկրապահ» ուսումնամարզական համալիրի կառուցման նախագծահետազոտական աշխատանքների

կատարման» գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ): Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը մերժելուց հետո գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Գնահատող հանձնաժողով) կողմից «Նորաշեն» ՆՏ ԱԿ-ին որպես հաջորդաբար տեղ զբաղեցնող մասնակցի առաջարկվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր: Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են այդ փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերում գնահատող հանձնաժողովը հայտնաբերել է որոշակի անհամապատասխանություններ և ծանուցել է «Նորաշեն» ՆՏ ԱԿ-ին շտկել այդ անհամապատասխանությունները: Ընկերության կողմից սահմանված ժամկետում բոլոր անհամապատասխանությունները շտկվել և ներկայացվել են: Գնահատող հանձնաժողովը բոլոր շտկված փաստաթղթերը գնահատել է բավարար և ընդունել է՝ բացառությամբ մեկի: «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող նախկինում կատարված SPAP II C-3.1.1.d պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) գնահատող հանձնաժողովը գնահատել է հրավերի պահանջներին չբավարարող և «Նորաշեն» ՆՏ ԱԿ-ի ներկայացված հայտը մերժել է: «Նորաշեն» ՆՏ ԱԿ-ի հայտը մերժելու մասին Գնահատող հաձնաժողովի կողմից կայացված որոշումը Ընկերությունը համարում է անիրավաչափ, որի դեմ ներկայացնում է սույն բողոքը:

«Նորաշեն» ՆՏ ԱԿ-ի կողմից ներկայացված որպես «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող նախկինում կատարված SPAP II C-3.1.1.d պայմանագիրը բաղկացած է իր բնույթով երկու տարբեր տեսակի ծառայությունների իրականացումից.

- նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ (Պայմանագրի փուլեր 1 և 2),
- օբյեկտների շինարարության հեղինակային հսկողության աշխատանքներ, բաժանորդային պայմանագրերի կնքում և խորհրդատվական ծառայությունների մատուցում (Պայմանագրի փուլեր 3 և 4) (այսուհետ՝ Այլ ծառայություններ):

Ընկերության կողմից ներկայացվել են Պայմանագրի 1-ին և 2-րդ փուլերի շրջանակներում իրականացված նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների վերաբերյալ հաշիվ-ֆակտուրաները և պատվիրատուի կողմից տրամադրված գրավոր հավաստումը (տեղեկանքը) նշված աշխատանքները պատշաճ

որակով և պայմանագրի պայմաններին համապատասխան իրականացված լինելու և պատվիրատուի կողմից դրանք ընդունվելու փաստի մասին: Պայմանագրի 1-ին և 2-րդ փուլերի շրջանակներում իրականացված նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները ավարտված են, իրենց բնույթով ամբողջական են, անջատված են պայմանագրի մյուս փուլերից (3-ից և 4-ից) և գումարային արտահայտությամբ կազմում են 10,245,115.2 ՀՀ դրամ:

Պայմանագրի 3-րդ և 4-րդ փուլերի ծառայությունների հանրագումարը կազմում է 5,111,284.8 ՀՀ դրամ: Ընկերության կողմից Պայմանագրի 3-րդ և 4-րդ փուլերին վերաբերող հաշիվ-ֆակտուրաները և պատվիրատուի կողմից տրամադրված գրավոր հավաստումը չի ներկայացրել գնահատող հանձնաժողովին, քանի որ պայմանագրի այդ փուլերով նախատեսվում է օբյեկտների շինարարության հեղինակային հսկողության աշխատանքների իրականացում, բաժանորդային պայմանագրերի կնքում և խորհրդատվական ծառայությունների մատուցում պատվիրատուին (այսուհետ՝ Այլ ծառայություններ), որոնք չեն համարվում նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ և դուրս են սույն ընթացակարգի շրջանակներից: Այդ մասին Ընկերությունը գրավոր տեղեկացրել է գնահատող հանձնաժողովին: Դեռ ավելին, եթե նույնիսկ Ընկերությունն այդ այլ ծառայությունների մասով գնահատող հանձնաժողովին ներկայացներ հաշիվ-ֆակտուրաները և պատվիրատուի գրավոր հավաստումը, ապա գնահատող հանձնաժողովը պետք է որակեր դրանք որպես ոչ նմանատիպ, քանի որ այդ ծառայությունները իրենց բնույթով նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ չեն:

Հետևաբար, պայմանագրի գնահատումը համանման (նմանատիպ) պետք է իրականացվի Պայմանագրի 1-ին և 2-րդ փուլերի մասով՝ այն է 10,245,115.2 ՀՀ դրամի չափով: Պայմանագիրը 10,245,115.2 ՀՀ դրամի չափով պետք է գնահատվի համանման (նմանատիպ) և հրավերի պահանջներին բավարարող, քանի որ.

- ընթացակարգի շրջանակներում, որպես համանման (նմանատիպ) պայմանագրեր են համարվում պահանջվող լիցենզիայի (ներդիրների) շրջանակներում նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները,

- իրականացվել են նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ,
- ներկայացվել են հաշիվ-ֆակտուրաները (հարկային հաշիվները),
- ներկայացվել է պատվիրատուի գրավոր հավաստումը (տեղեկանքը) նշված աշխատանքները պատշաճ որակով և պայմանագրի պայմաններին համապատասխան իրականացված լինելու և պատվիրատուի կողմից դրանք ընդունվելու փաստի մասին,
- բավարարում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներին, այն է. պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ՝ 10,245,115.2 ՀՀ դրամ, պակաս չէ սույն գնման ընթացակարգի շրջանակներում մեր կողմից ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից (35,000,000 X 20% = 7,000,000) և աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը) գումարային արտահայտությամբ ներկայացված մյուս պայմանագրերի հետ միասին՝ 20,182,115.20 ՀՀ դրամ, պակաս չէ սույն գնման ընթացակարգի շրջանակներում մեր կողմից ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից (35,000,000 X 50% = 17,500,000):

Ընկերությունը նշել է նաև, որ ըստ էության գնահատող հանձնաժողովի կողմից «Նորաշեն» ՆՏ ԱԿ-ից պահանջվել է ընթացակարգի առարկային առընչություն չունեցող փաստաթղթերի ներկայացում: Սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Կարգի 65-րդ կետի համաձայն գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը

սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Փաստորեն գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետի, Կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ ենթակետերի և 65-րդ կետի պահանջները:

Հաշվի առնելով վերը շարադրվածը Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Նորաշեն» ՆՏ ԱԿ-ի ընթացակարգի շրջանակներում ներկայացրած SPAP II C-3.1.1.d պայմանագրերը հրավերի պահանջներին չբավարարող որակելը և այդ հիմքով «Նորաշեն» ՆՏ ԱԿ-ի ներկայացրած հայտը մերժելը անիրավաչափ է:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝

- «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝ «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի հայտը մերժելու մասին որոշումը ճանաչել անիրավաչափ.
- «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը ճանաչել անիրավաչափ.
- Պարտավորեցնել «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի կողմից ներկայացված SPAP II C-3.1.1.d պայմանագիրը գնահատել հրավերի պահանջներին բավարարող.
- Պարտավորեցնել «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ շարունակել «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով ընթացակարգը՝ օրենքով սահմանված կարգով «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի, որպես հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտը գնահատել բավարար և ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

«Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.06.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 22.06.2018թ. թիվ 02/16.4/2916-18 գրությամբ հայտնել է, որ «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնման գործընթացի հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ն ծանուցումը ստանալուց հետո սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, որոնց ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1. «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով ներկայացվել են հինգ պայմանագրեր՝

- բացակայում են ներկայացված N ԾՔ-ՊԸԱՇՁԲ-15/2 պայմանագրի N 3 հավելվածը, N ԾՔ-ՊԸԱՇՁԲ-15/8 պայմանագրի N 3 և N 3.1 հավելվածները, N «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15/08-6» պայմանագրի N 4 և N 4.1 հավելվածները.

- Ներկայացված «SPAP II C-3.1.1.d» պայմանագիրը հաստատված է միակողմանի՝ միայն Պատվիրատուի կողմից: Պայմանագրի ընդհանուր գինը 15 356 400 ՀՀ դրամ է, որի կատարման վերաբերյալ ներկայացվել են միայն 10 245 115.2 ՀՀ դրամի հաշիվ-ապրանքագրերը և այդ գումարի չափով պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Չեն ներկայացվել Պայմանագրի մնացած գումարի՝ 5 111 284.8 ՀՀ դրամի չափով հաշիվ-ապրանքագրերը և պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրության) կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

2. «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով՝

- 5.2 հավելվածի «որակավորումը» սյունակի և մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ) տվյալները չեն համապատասխանում միմյանց,

- 5.2 հավելվածով ներկայացված «Հրաչյա Բաբյան» մասնագետի վերաբերյալ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացված չեն:

Վերը նշված անհամապատասխանությունների վերաբերյալ ծանուցվել է Ընկերությանը և առաջարկվել՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել թերությունները և բացակա փաստաթղթերի հետ ներկայացնել:

Ընկերության կողմից չեն ներկայացվել Պայմանագրի կատարման վերաբերյալ 5 111 284.8 ՀՀ դրամի չափով հաշիվ-ապրանքագրերը և Պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրության) կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը՝ հիմնավորելով, որ պայմանագիրը բաղկացած է 4 փուլից, որից 3-րդ և 4-րդ փուլերով սահմանված ծառայությունների բնույթը դուրս է ընթացակարգի շրջանակներից:

Մնացած անհամապատասխանությունները շտկվել և ներկայացվել են:

Պայմանագիրը սահմանված կարգով գնահատելու նպատակով հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պարզաբանում ստանալու նպատակով համապատասխան գրությամբ ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեն դիմել և լիազորված մարմնից ստացել է պարզաբանում:

Գնահատող հանձնաժողովը որոշել է Պայմանագիրը գնահատել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 61-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջներին չբավարարող և Ընկերության հայտը մերժել, քանի որ չեն ներկայացվել Պայմանագիրը կատարած լինելու հանգամանքը հավաստող հաշիվ-ապրանքագրերի պատճենները (Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետ), ինչպես նաև՝ Պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ Պայմանագրի կողմերի հաստատած՝ Պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պատվիրատուն գտնում է, որ Ընկերության ներկայացրած բողոքը ենթակա է մերժման:

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.06.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/71 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/71 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքի տարածքում «Եռասերունդ երկրապահ» ուսումնամարզական համալիրի կառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.06.2018թ. ժամը 17:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.1 ենթակետի համաձայն՝ «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ին որպես հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին, ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.06.2018թ. ժամը 17:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, այդ թվում նաև՝ ներկայացված «SPAP II C-3.1.1.d» պայմանագիրը հաստատված է միակողմանի՝ միայն Պատվիրատուի կողմից: Պայմանագրի ընդհանուր գինը 15 356 400 ՀՀ դրամ է, որի

կատարման վերաբերյալ ներկայացվել են միայն 10 245 115.2 ՀՀ դրամի հաշիվ-ապրանքագրերը և այդ գումարի չափով պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: Չեն ներկայացվել Պայմանագրի մնացած գումարի՝ 5 111 284.8 ՀՀ դրամի չափով հաշիվ-ապրանքագրերը և պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն) կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմից գրավոր հավաստումը:

Ընկերությանը ծանուցվել է վերոհիշյալ անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.06.2018թ. ժամը 17:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետի 5.1 ենթակետի համաձայն՝ «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի կողմից չեն ներկայացվել Պայմանագրի կատարման վերաբերյալ 5 111 284.8 ՀՀ դրամի մասով հաշիվ-ապրանքագրերը և Պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն) կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմից գրավոր հավաստումը՝ հիմնավորելով, որ պայմանագիրը բաղկացած է 4 փուլից, որից 3-րդ և 4-րդ փուլերով սահմանված ծառայությունների բնույթը դուրս է ընթացակարգի շրջանակներից:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.06.2018թ. ժամը 17:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 61-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջները և ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումը, որոշել է Պայմանագիրը գնահատել հրավերի պահանջներին չբավարարող, քանի որ չեն ներկայացվել Պայմանագիրը ողջ ծավալով կատարված լինելու հանգամանքը հավաստող-հաշիվ-ապրանքնագրերը և այն սահմանված ժամկետում կատարված լինելու հանգամանքը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն) կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմից գրավոր հավաստումը:

Ընկերության կողմից ներկայացված նմանատիպ 5 պայմանագրերից ոչ մեկը չի բավարարում Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի պահանջին՝ այն է մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ չպետք է պակաս լինի տվյալ

գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

«Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի կողմից ներկայացված պայմանագրերը գումարային արտահայտությամբ պակաս են տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից («SPAP II C-3.1.1.d» պայմանագիրը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին չբավարարող):

Նույն արձանագրության 7-րդ կետի 7.2-րդ ենթակետով կայացված որոշմամբ «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի հայտը մերժվել է և Ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

6. «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև 24.08.2015թ. կնքվել է «SPAP II C-3.1.1.d» ծածկագրով պայմանագիր, որն բաղկացած է երկու տեսակի ծառայություններից՝

- Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ (Պայմանագրի 1-ին և 2-րդ փուլեր) գումարային արտահայտությամբ՝ 10 245 115,2 ՀՀ դրամ.
- Օբյեկտների շինարարության հեղինակային հսկողության աշխատանքներ, բաժանորդային պայմանագրի կնքում և խորհրդատվական ծառայությունների մատուցում (Հեղինակային հսկողություն) (Պայմանագրի 3-րդ և 4-րդ փուլեր), գումարային արտահայտությամբ՝ 5 111 284,8 ՀՀ դրամ:

<u>4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի 20.06.2018թ. բողոքը, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի 22.06.2018թ. թիվ 02/16.4/2916-18 գրությունը և կից փաստաթղթերը, 24.08.2015թ. կնքված «SPAP II C-3.1.1.d» պայմանագիրը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը)

գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3)....

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքի տարածքում «Եռասերունդ երկրապահ» ուսումնամարզական համալիրի կառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետի 1-ին պարբերությամբ սահմանվել է, որ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայ-տությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում սույն հրավերով պահանջվող լիցենզիայի (ներդիրների) շրջանակներում նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների նախկինում կատարված պայմանագրերը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերով

սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընկերության կողմից հայտի թիվ 4 հավելվածով ներկայացվել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 35 000 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.06.2018թ. ժամը 17:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը սահմանված կարգով մերժելուց հետո, «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ին որպես հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին, ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.06.2018թ. ժամը 17:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, այդ թվում նաև՝ ներկայացված «SPAP II C-3.1.1.d» պայմանագիրը հաստատված է միակողմանի՝ միայն պատվիրատուի կողմից: Պայմանագրի ընդհանուր գինը 15 356 400 ՀՀ դրամ է, որի կատարման վերաբերյալ ներկայացվել են միայն 10 245 115.2 ՀՀ դրամի հաշիվ-ապրանքագրերը և այդ գումարի չափով պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: Չեն ներկայացվել Պայմանագրի մնացած գումարի՝ 5 111 284.8 ՀՀ դրամի չափով հաշիվ-ապրանքագրերը և պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն) կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմից գրավոր հավաստումը:

Ընկերությանը ծանուցվել է վերոհիշյալ անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.06.2018թ. ժամը 17:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետի 5.1 ենթակետի համաձայն՝ «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի կողմից չի ներկայացվել Պայմանագրի կատարման վերաբերյալ 5

111 284.8 ՀՀ դրամի մասով հաշիվ-ապրանքագրերը և Պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն) կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմից գրավոր հավաստումը՝ հիմնավորելով, որ պայմանագիրը բաղկացած է 4 փուլից, որից 3-րդ և 4-րդ փուլերով սահմանված ծառայությունների բնույթը դուրս է ընթացակարգի շրջանակներից: Մնացած անհամապատասխանությունները շտկվել են:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.06.2018թ. ժամը 17:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 61-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջները և ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումը, որոշել է Պայմանագիրը գնահատել հրավերի պահանջներին չբավարարող, քանի որ չեն ներկայացվել Պայմանագիրը ողջ ծավալով կատարված լինելու հանգամանքը հավաստող-հաշիվ-ապրանքնագրերը և այն սահմանված ժամկետում կատարված լինելու հանգամանքը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն) կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմից գրավոր հավաստումը:

Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության կողմից ներկայացված նմանատիպ 5 պայմանագրերից ոչ մեկը չի բավարարում Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի պահանջին՝ այն է մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

«Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի կողմից ներկայացված պայմանագրերը գումարային արտահայտությամբ պակաս են տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից («SPAP II C-3.1.1.d» պայմանագիրը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին չբավարարող):

Նույն արձանագրության 7-րդ կետի 7.2-րդ ենթակետով կայացված որոշմամբ «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի հայտը մերժվել է և Ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

Այսպես՝ «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև 24.08.2015թ. կնքված 15 356 400 ՀՀ դրամ ընդհանուր գնով «SPAP II C-3.1.1.d» ծածկագրով պայմանագիրը, որն իր բնույթով բաղկացած է երկու տեսակի ծառայություններից՝

- Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ (Պայմանագրի 1-ին և 2-րդ փուլեր) գումարային արտահայտությամբ՝ 10 245 115,2 ՀՀ դրամ.
- Օբյեկտների շինարարության հեղինակային հսկողության աշխատանքներ, բաժանորդային պայմանագրի կնքում և խորհրդատվական ծառայությունների մատուցում (Հեղինակային հսկողություն) (Պայմանագրի 3-րդ և 4-րդ փուլեր), գումարային արտահայտությամբ՝ 5 111 284,8 ՀՀ դրամ:

Ընկերությունը «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է «SPAP II C-3.1.1.d» ծածկագրով պայմանագիրը, Պայմանագրի շրջանակներում 1-ին և 2-րդ փուլերով կատարված աշխատանքների («ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի ՀՍԾՏԿ-ի շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և շինարարության թույլտվության ապահովում» (1-ին փուլ), «ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի ՀՍԾՏԿ-ի շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և շինարարության թույլտվության ապահովում» (2-րդ փուլ)) 4 833 212,4 ՀՀ դրամի և 5 411 902,8 ՀՀ դրամի չափով հաշիվ-ապրանքագրերը, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ղեկավարի կողմից 27.09.2017թ. տրված թիվ 44 տեղեկանքը, համաձայն որի՝ ՀՀ ֆինանսների նախարարության Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոնական պետական հիմնարկի միջոցով և «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի միջև 24.08.2018թ. կնքված «SPAP II C-3.1.1.d» պայմանագրի շրջանակներում, «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի կողմից իրականացվել են Ախուրյանի ՀՍԾՏԿ-ի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները՝ 4 833 212,4 ՀՀ դրամի չափով և Ամասիայի

ՀՍԾՏԿ-ի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները՝ 5 411 902,8 ՀՀ դրամի չափով:

Նույն գրության համաձայն՝ օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի կողմից իրականացվել են ժամանակին, պատշաճ որակով, համապատասխանում են պայմանագրում ամրագրված տեխնիկական բնութագրերին և ընդունվել են պատվիրատուի կողմից:

Այսպես հրավերով նախատեսվել է, որ մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, ***<u>եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը</u> (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:*** Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվել հրավերով պահանջվող լիցենզիայի (ներդիրների) շրջանակներում ***<u>նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների</u>*** նախկինում կատարված պայմանագրերը:

«Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի կողմից ներկայացված «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև 24.08.2015թ. կնքված 15 356 400 ՀՀ դրամ ընդհանուր գնով «SPAP II C-3.1.1.d» ծածկագրով պայմանագիրն ընդհանուր առմամբ բաղկացած է 4 առանձին փուլերից, որոնց շրջանակներում իրականացվող աշխատանքները իրենց բնույթով համախմբված են երկու խոշոր առանձին փուլերի մեջ: 1-ին և 2-րդ փուլերով նախատեսվել են ***<u>նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների իրականացումը, որոնց ընդհանուր արժեքը 10 245 115,2 ՀՀ դրամ է:</u>***

Պայմանագրի 3-րդ և 4-րդ փուլերով նախատեսվել են հեղինակային հսկողության ծառայությունների մատուցումը:

«Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել են պայմանագրով նախատեսված 1-ին և 2-րդ փուլերով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների իրականացման հաշիվ-ապրանքնագրերը և նշված աշխատանքների մասով պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: Այսպիսով՝ Ընկերության կողմից ներկայացված «ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի ՀՍԾՏԿ-ի շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և շինարարության թույլտվության ապահովում» (1-ին փուլ), «ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի ՀՍԾՏԿ-ի շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և շինարարության թույլտվության ապահովում» (2-րդ փուլ) աշխատանքների հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ղեկավարի կողմից 27.09.2017թ. տրված թիվ 44 տեղեկանքի համաձայն՝ «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի կողմից «SPAP II C-3.1.1.d» ծածկագրով պայմանագրի շրջանակներում պատշաճ կարգով իրականացվել են Պայմանագրով որպես աշխատանքների առանձին փուլ նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

Դրա հետ մեկտեղ Ընկերությունը ԳԲԽ-ԱՄ-2018/71 բողոքի քննության շրջանակներում ներկայացրել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կողմից 26.06.2018թ. տրված թիվ 55 տեղեկանքը, որով ևս մեկ անգամ ամրագրվել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի միջև 24.08.2018թ. կնքված «SPAP II C-3.1.1.d» պայմանագիրն իր բնույթով բաղկացած է երկու տեսակի ծառայությունների իրականացումից.

- Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ (Պայմանագրի 1-ին և 2-րդ փուլեր).
- Օբյեկտների շինարարության հեղինակային մշակման աշխատանքներ, բաժանորդային պայմանագրի կնքում և խորհրդատվական ծառայությունների մատուցում

(Պայմանագրի 3-րդ և 4-րդ փուլեր) (այսուհետ՝ Հեղինակային հսկողություն և այլ ծառայություններ):

Նույն գրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ Պայմանագրի շրջանակներում Ընկերության կողմից իրականացվել են Ախուրյանի և Ամասիայի ՀՍԾՏԿ-ի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները (Պայմանագրի փուլեր 1 և 2), որոնք գումարային արտահայտությամբ կազմում են 10 245 115.2 ՀՀ դրամ: Նշված օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները Ընկերության կողմից իրականացվել են ժամանակին, ամբողջ ծավալով, պատշաճ որակով, համապատասխանում են Պայմանագրում ամրագրված տեխնիկական բնութագրերին և ընդունվել են պատվիրատուի կողմից: ***Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներն իրենց բնույթով ամբողջական են, անջատված են Պայմանագրի մյուս փուլերից (3-ից և 4-ից), այդ մասով պայմանագիրը կատարված է, և պայմանագրային պարտավորությունները կողմերի միջև ավարտված են:***

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է նաև, որ հեղինակային հսկողության, բաժանորդային պայմանագրերի կնքման և խորհրդատվական ծառայությունների մատուցման շրջանակներում (Պայմանագրի 3-րդ և 4-րդ փուլեր) նախատեսված է համապատասխանաբար Ախուրյանի և Ամասիայի ՀՍԾՏԿ-ների շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության, օբյեկտների գազամատակարարման, ջրամատակարարման, էլեկտրամատակարարման, հեռախոսակապի, հակահրդեհային թույլտվությունների ստացման և բաժանորդային պայմանագրերի կնքման աշխատանքների իրականացում: Ընկերության կողմից իրականացվել են Ամասիայի ՀՍԾՏԿ-ի շինարարական աշխատանքներին զուգընթաց օբյեկտի հեղինակային հսկողության աշխատանքները և նշված խորհրդատվական ծառայությունները, որոնք ընդունվել են Պատվիրատուի կողմից:

Ներկայումս ընթանում են Ախուրյանի ՀՍԾՏԿ-ի շինարարական աշխատանքները, որին զուգընթաց Ընկերության կողմից իրականացվում են օբյեկտի հեղինակային հսկողության և նշված խորհրդատվական ծառայությունների մատուցումը: Այս մասով նույնպես

ծառայությունները «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի կողմից մատուցվում են պատշաճ որակով և պայմանագրի պայմաններին համապատասխան:

Այսպիսով՝ Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետը սահմանում է, որ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, ***<u>եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված</u>*** ապրանքների, ***<u>մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)</u>***՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի միջև 24.08.2018թ. կնքված «SPAP II C-3.1.1.d» պայմանագրով նախատեսված նախագծանախահաշվային աշխատանքներն իրենց բնույթով անհրաժեշտ է դիտարկել տարանջատված և համապատասխան ծավալով առանձին փուլ կազմող աշխատանքներ, որոնք պատշաճորեն կատարվել են Ընկերության կողմից և սահմանված կարգով ընդունվել են պատվիրատուի կողմից և Պայմանագիրն այդ մասով համարվում է ավարտված, հետևաբար նշված աշխատանքներն անհրաժեշտ է դիտարկել որպես Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված՝ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքներ: Ընդ որում՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ղեկավարի կողմից 27.09.2017թ. և 26.06.2018թ. տրված թիվ 44 և թիվ 55 տեղեկանքների, ինչպես նաև հաշիվ-ապրանքագրերի համաձայն՝ 24.08.2018թ. կնքված «SPAP II C-3.1.1.d» պայմանագրի շրջանակներում «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի կողմից իրականացվել են Ախուրյանի ՀԱԾՏԿ-ի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները՝ ***<u>4 833 212,4 ՀՀ դրամի չափով</u>*** և Ամասիայի ՀԱԾՏԿ-ի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները՝ ***<u>5 411 902,8 ՀՀ դրամի չափով</u>***, ընդհանուր՝

Պայմանագրի շրջանակներում իրականացվել են ***10 245 115,2 ՀՀ դրամի*** գումարային արտահայտությամբ նախագծանախահաշվային աշխատանքներ:

Դրա հետ մեկտեղ՝ Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, ***որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:***

Տվյալ դեպքում Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է 35 000 000 ՀՀ դրամ, իսկ Պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ կազմում է 10 245 115,2 ՀՀ դրամ, որը պակաս չէ գնային առաջարկի քսան տոկոսից: Ինչ վերաբերում է նախկինում կատարված պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալի գումարային արտահայտությամբ մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից պակաս չլինելու հանգամանքին, ապա սույն հարցը չի կարող քննարկման առարկա հանդիսանալ սույն բողոքի շրջանակներում, քանի որ վիճարկման առարկա է հանդիսանում Ընկերության կողմից ներկայացված միայն 24.08.2018թ. «SPAP II C-3.1.1.d» պայմանագիրը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է բողոքով ներկայացված՝ «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ին, որպես հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտը բավարար գնահատելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու պահանջին, ապա բողոքը սույն մասով ենթակա է մերժման, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի

օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն է որոշում գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):

Օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի համաձայն՝

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ սույն բողոքի շրջանակներում քննարկման առարկա է դարձել «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացված միայն 24.08.2018թ. «SPAP II C-3.1.1.d» պայմանագիրը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի 20.06.2018թ. բողոքն հիմնավոր է և ենթակա է բավարարման մասնակի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի 20.06.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի.

- Պարտավորեցնել «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնելու «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը.
- Պարտավորեցնել «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնելու «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի՝ սույն որոշման մեջ քննարկված հիմքով հայտը մերժելու մասին որոշումը.

- Պարտավորեցնել «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ի կողմից ներկայացված 24.08.2018թ. «SPAP II C-3.1.1.d» պայմանագիրը սույն որոշման մեջ նշված հիմնավորումների շրջանակներում գնահատել հրավերի պահանջներին համապատասխանող:
- «Նորաշեն» նախագծա-տեխնոլոգիական ԱԿ-ին, որպես հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտը բավարար գնահատելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու պահանջի մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**